
**ԳՐԱԲԱՐԻ ՍՈՍԿԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐԻ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՍՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԳԱԼՍՅԱՆ Լ. Ն.

Թեև հայ քերականագիտությունը անդրադարձել է գրաբարի սոսկա-ծանցավոր բայերի՝ արևմտահայերենում կրած կառուցվածքային փոփո-խություններին¹, բայց մինչև այսօր դրանց ամբողջական, հանգամանակից քննություն չի կատարվել: Այդպիսի քննություն կատարելու նպատակով համեմատել ենք գրաբարի բառարանների² և արդի արևմտահայերենի՝ ինչպես բառարանների³, այնպես էլ գեղարվեստական գրականության և մամուլի սվյալները:

Գրաբարի **Ե** լծորդության **-ան-** ածանցավոր 76 բայերից 7-ը գրական արևմտահայերենը չի ժառանգել: Մյուսներից պարզ զուգակիցներ չունեցողներն արևմտահայ գրական լեզվում մնացել են գրեթե **-ան-** ածանցի **ա-**ի սղումով: Օրինակ՝ **գտանել > գտնել, տեսանել > տեսնել**: Բացառություն են կազմում **բեկանել, կլանել**⁴, **սպաննել** (< սպանանել), **տանել** բայերը: **Տանել**-ն անվթար պահպանվել է արևմտական ձայնավորի բացակայության պատճառով, իսկ **սպաննել**-ը, ածանցի հնչյունափոխված տարբերակի ձուլումով, **բեկանել, կլանել** բայերի նման աշխարհաբարին է անցել իբրև պարզ բայ:

Ե լծորդության **-ան-** ածանցավոր մի խումբ բայեր կորցրել են ամբողջ **-ան-** ածանցը: Օրինակ՝ **երգիծանել > երգիծել, հատանել > հատել**: **-Ան-** ածանցի անկում **Ե** խոնարհման բայերի մեջ նկատվում էր դեռևս հնում⁵: Գրաբարում կային **ել/անել** զուգահեռությամբ 24 բայեր, որոնք ևս արևմտահայերենում պահվել են **-ել** ձևով: Սա նշանակում է, որ զուգահեռ ձևերը կորցրել են երբեմնի իմաստային տարբերությունները:

¹ Տե՛ս **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Ե., 1988, էջ 60, 70, **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Բ, Ե., 1961, էջ 5-9::

² Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ.1, 2, Ե., 1979, 1981 (այսուհետև՝ ՆՀԲ), Առձեռն բառարան հայկազեան լեզուի, Անթիլիաս, 1988 (այսուհետև՝ ԱԲ):

³ Հայոց լեզուի նոր բառարան, հ. 1, 2, Պէրոյթ, 1992 (այսուհետև՝ ՀՆԲ), Բառարան գանձարան հայերեն լեզուի, Պէրոյթ, 1983 (այսուհետև՝ ԲԳՀ):

⁴ **Բեկանել, կլանել** բայերի պատմական զարգացման մասին տե՛ս Գալստյան Լ., Արդի արևմտահայերենի բայական մի քանի զուգաձևություններ (Բանբեր Երևանի համալսարանի, 2000, N 1, էջ 168):

⁵ Մյս մասին տե՛ս Բագրատունի Ա., Հայերեն քերականությունից ի պետս զարգացելոց, Վենետիկ, 1852, էջ 152, **Այտընյան Ա.**, նշվ. աշխ., էջ 92, Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, գիրք Ա, Ե., 1959, էջ 399, **Աբրահամյան Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Ե., 1976, էջ 101, Առաքելյան Վ., Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն, Ե., 1955, էջ 306:

Այսպիսով, գրաբարի **Ե** լծորդության **-ան-** ածանցավոր բայերն արևմտահայերենում ունեն երկակի դրսևորում՝ **-ել** կամ **-նել** վերջավորվող ձևեր:

Գրաբարի **Ի** լծորդության **-ան-** ածանցավոր 68 բայերից 6-ը գրական արևմտահայերենը չի ժառանգել: Մի քանի բայերի իմաստները սկսել են արտահայտվել ուրիշ բայերով, օրինակ՝ **ազանհիմ-հագնիլ, լեզուանհիմ-շաղակրատիլ**: Անփոփոխ են մնացել **ուսանիլ, գերծանիլ**⁶ բայերը, իսկ **զիջանիմ, ծնանիմ, շիջանիմ, սնանիմ** գրական արևմտահայերենում պահպանվելով գրաբարյան ձևով՝ միաժամանակ ձեռք են բերել պարզ գուգահեռներ՝ **զիջիլ, ծնիլ, շիջիլ, սնիլ**, որոնք իմաստային տեսակետից հավասարաթեք են, բացառությամբ նրբիմաստային տարբերություններ ունեցող **զիջանիլ/զիջիլ**⁷ գուգահեռների: Բառական շրջանառության տեսակետից արդի փուլում միշտ չէ, որ առավել հաճախական են հետգրաբարյան շրջանում ձևավորված տարբերակները: Այսպես, **սնանիլ**-ը գործածականությամբ գերազանցում է **սնիլ** ձևին:

6 բայ (**բուսանիմ, հագանիմ, հատանիմ, մեռանիմ, անցանիմ** (նաև **-անեմ**), **հասանիլ** (նաև **-անեմ**)) արևմտահայերենին են անցել **-ան-** ածանցի **ա-**ի սղումով: Անկանիլ բայը **-ան-** ածանցի **ա** ձայնավորը սղելու հետ մեկտեղ, ի տարբերություն քննվածների, լծորդափոխվել է՝ **անկանիլ > իյնալ**: Հ. Գազանճյանը կարծում է, որ իյնալ բայը ծագել է **անկանիլ > անկնիլ > ինկնիլ > իյնիլ > իյնալ** ձևափոխությամբ⁸: Իսկ Հ. Աճառյանը անկանիլ բայի ձևափոխությունները ներկայացնում է հետևյալ հաջորդականությամբ. **անկանիլ > ընկնիլ > ինկնիլ > իյնիլ > իյնալ**: Նշում է նաև, որ **ընկնիլ > ինկնիլ** անցումը պայմանավորվել է «նախաձայն **ը-**ի՝ վերջին ձայնավորին հարմարվելով»⁹: Այս ամենին համաձայնելով՝ ունենք մի փոքրիկ հավելում: Մեզ հավանական է թվում, որ **նկ > ի** հնչյունափոխությունը անկանիլ բայի մեջ միանգամից չի կատարվել. նախ ընկել է արմատական **կ-**ն, ինչպես այդ տեղի է ունեցել **զարկնել (*զարկանել)** ձևի մեջ (հմմտ. **զարկնել (*զարկանել) > զարնել, ինկնիլ (*անկանիլ) > իննիլ**): Մեր կարծիքով, իննիլ ձևն, ի տարբերություն **զարնել**-ի, արտասանական որոշ անհարմարություն է հարուցում, որի հաղթահարման նպատակով էլ կրկնակ ն-երից առաջինը ժողովրդական լեզվում փոխարինվել է **յ**-ով (**իննիլ > իյնիլ**):

Գրաբարի **Ի** լծորդության **-ան-** ածանցավոր չեզոք սեռի 7 բայ պարզության, որոշակիության և միօրինակության ձգտող արևմտահայ աշխարհաբարում օրինաչափորեն կորցրել են **-ան-** ածանցը: Մրանցից 3-ը՝ փրթիլ, պրծիլ, սկսիլ, Ի

⁶ Թեև արդի արևմտահայերենի բառարաններն արձանագրում են **գերծանիլ** բայը, այսուամենայնիվ, պետք է նշել, որ այն արդի արևմտահայերենում խիստ սահմանափակ գործածություն ունի, գրքային է. ոչ միայն խոսակցական, այլև հաճախ գրական-պաշտոնական լեզվում այդ իմաստն արտահայտվում է **ազատիլ, փրկուիլ, պրծիլ** բայերով:

⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Գալստյան Լ., նշվ. հոդվ., էջ 168:

⁸ Տե՛ս Գազանճեան 3., Արդի հայերենի քերականություն, Բարձրագոյն դասընթացք, Պոլիս, 1920, էջ 199:

⁹ Տե՛ս Աճառյան Հ., Քննություն պոլսահայ բարբառի, Ե., 1941, էջ 17:

լծորդության պարզ բայերի մեջ բացառություն կազմող այն հինգ բայերից են, որոնք կատարյալի հիմքն արևատական է:

Անիմ վերջավորվող մի խումբ բայեր, որոնք ունեն կրավորական կամ (և) չեզոք նշանակություններ, գրական արևատահայերենում օրինաչափորեն վերջավորվում են **-ուիլ**, օրինակ՝ **արգելանիս>արգիլուիլ, դիզանիս>դիզուիլ**:

Ի լծորդության **-ան-** ածանցավոր միայն մեկ՝ **փլանիս** բայն է **-ան-** ածանցը փոխարինել **-չ-**ով՝ **փլչիլ**¹⁰: «Ամեն ինչ **կը փլչեր** պատերազմեն դուրս եկող սերունդին դիմաց, սերունդին հոգիին մեջ»¹¹:

Գրաբարում գործում էր լեզվական մի ավանդույթ, համաձայն որի **-անիս, -չիս, -նուս** վերջավորված բայերի փոխանակությունը սովորական երևույթ էր. այն պայմանավորված էր լեզվական անհրաժեշտությամբ: Պատահական չէ, որ գրական աշխարհաբարում պահպանվել է բայաշարքերի այն անդամը, որը կանոնավորապես ունի խոնարհման բոլոր ձևերը և ոչ թե փոխ է առնում նույնարմատ այլ բայաձևից.

թոնում-թոչիս-թռանիս – ից՝ **թոչիլ**
սկսում-սկսանիս – ից՝ **սկսիլ** (< սկսանիլ)
ջեռում-ջեռիս-ջեռանիս – ից՝ **ջեռիլ** (< ջեռանիլ):

Այն հանգամանքը, որ վերջին բայաշարքից պահպանվել է օխտորնակ ձևեր չունեցող **ջեռիլ** բայը, չպետք է տարակուսանքի տեղիք տա հետևյալ պարզ պատճառով. **ջեռիլ**-ը **ջեռանիլ**-ի հետագա ձևափոխության արդյունքն է, ինչպես և **սկսիլ**-ը՝ **սկսանիլ**-ի: Ինչ վերաբերում է առաջին բայաշարքում երկու հնարավոր ձևերից **թոչիս** (և ոչ թե **թոնում**) ձևի պահպանվելուն, ապա այդ էլ բացատրվում է տարածված խոնարհումների առնմանվելու, միօրինականալու լեզվի ընդհանուր միտումով: Ահա **թռանիլ** և նման բայերի համաբանությամբ էլ **փլանիլ**-ը կարող էր դուրս գալ գործածությունից (թեև այն, ի տարբերություն **թռանիլ**-ի, ուներ սեփական, ոչ թե փոխառյալ «խտորնակ ձև»՝ **փլայ**) և փոխարինվել փլչիլ ձևով, մանավանդ որ **չիլ** վերջավորությունը, ի տարբերություն **անիլ**-ի, ուներ բացառապես չեզոք սեռի նշանակություն:

Թոնում-թոչիս-թռանիս տարաձևերից արևմտյան գրական լեզվում **թոչիս**-ի հաստատված լինելը ենթադրել է տալիս, թե նույն ածանցներով ձևավորված **նստում-նստչիս-նստանիս** տարաձևերից պետք է հաղթած լիներ **նստչիս**-ը: Մակայն սպասելի **նստչիս** ձևի փոխարեն արևմտահայ գրական լեզվում մինչև XX դ. վերջին քառորդը առկա էր **նստնուլ**¹³ բայաձևը: **Ոստչիս** բայաձևը չի հաղթել, մեր

¹⁰ Կան գրաբարում **անիլ**-ով վերջավորվող էլի մի երկու բայ, որոնք արևատահայերենում ներկայանում են **չիլ** կազմությամբ, սակայն դրանք, ի տարբերություն **փլանիլ**-ի, գրաբարում ունենին **չիլ**-ով վերջավորվող գուգահեռներ:

¹¹ Բագին (այսուհետև՝ Բ), Պեյրուք, 1962, N 8, էջ 42:

¹² Տե՛ս Աճառյան Հ., Լիակատար քերականություն..., հ. 4, գիրք Ա, էջ 319:

¹³ Այժմ այն չի կիրառվում. դրա իմաստն արտահայտվում է **ցատկել** բայով:

կարծիքով, այն պատճառով, որ այն *նստանիմ/նստնում* ձևերի համեմատությամբ ունի իմաստային հավելում¹⁴:

Ինչպես տեսնում ենք, գրաբարի *Բ* լծորդության *-ան-* ածանցավոր բայերը արևմտահայերենում մնացել են նույն լծորդության սահմաններում՝ ենթարկվելով կառուցվածքային օրինաչափ փոփոխությունների՝ *անիլ>իլ, անիլ>նիլ, անիլ>չիլ, անիլ>ուիլ*:

Գրաբարի *Ա* լծորդության *-ան-* ածանցավոր 567 բայերից 304-ը գրական արևմտահայերենը չի ժառանգել, 148-ը անփոփոխ է մնացել, 1-ը փոխարինվել է ուրիշ բառով՝ *հերիքանամ-բաւել*: 114-ը ձևային կամ կառուցվածքային փոփոխության է ենթարկվել: Դրանցից 36-ը գրական արևմտահայերենում սղել է *-ան-* ածանցի ա ձայնավորը (ան>ն): Այդ բայերի գրեթե կեսը (18 բայ) արդի արևմտահայերենում զուգահեռաբար հանդես է գալիս իր նախկին ձևով, որպիսին ուներ գրաբարում՝ պահպանելով ածանցի ամբողջական ձևը: Նորակազմ ձևերը ոչ միշտ են առավել հաճախական: Կիրառական տեսակետից որոշ դեպքերում աչքի են ընկնում հին ձևերը: Այսպես, առավել գործածական են՝ *-նալ* ձևերից՝ *երկննալ, թեթննալ, թուլնալ, խոշորնալ, կանաչնալ, կարօտնալ, հիննալ, սենալ, ողջննալ, -անալ* ձևերից՝ *ծուլանալ, կուրանալ, դիրանալ*:

Քննարկվող 36 բայերից միայն 3-ն են ներգործական՝ *գողնալ* (<գողանալ), հասկնալ (<հասկանալ), մոռնալ (<մոռանալ): *(Ս)նալ* վերջավորությունը կարելի է դիտել որպես չեզոք սեռի ձև, իսկ այդ վերջավորությամբ փոքրաթիվ ներգործական բայերի առկայությունը չի փոխում վիճակը: Մի քանի բայ գրկվել է *-ան-* ածանցից, սակայն պահպանել լծորդությունը¹⁵, օրինակ՝ *պղպջանալ-պղպջալ, ցոլանալ-ցոլալ*: *-Ան-* ածանցն այս բայերի մեջ վերածության կամ տևականության գաղափար չի արտահայտում, աննշանակ է, ուստի և դուրս է եկել գործածությունից: Մի քանիսն էլ գրկվել են *-ան-* ածանցից և լծորդափոխվել, օրինակ՝ *գատամանալ-գատամիլ, ծաւալանալ-ծաւալիլ*: Արևմտահայերենում թե՛ (ա)նալ, թե՛ իլ վերջավորությունները գերազանցապես չեզոք սեռի արտահայտիչներ են, ուստի կարող են փոխարինել միմյանց: Գրաբարում *-անալ-* ով վերջավորվող 8 բայ արևմտահայերենում վերջավորվում են *-ուիլ-ով*: Օրինակ՝ *գատանամ-գատուիլ, թաքնանամ-թաքնուիլ*: Տվյալ դեպքերի համար *ու-*ն կրավորական ածանց չէ, այլ կատարում է բայակազմական դեր:

Այսպիսով, գրաբարի *Ա* լծորդության *-ան-* ածանցավոր բայերի՝ արևմտահայերենում կրած փոփոխությունները լիովին պատճառաբանվում են արևմտահայ գրական լեզվի քերականական կառուցվածքի օրենքներով:

Գրաբարի *Ու* լծորդության *-ն-* ածանցավոր 65 բայերից արևմտահայերենի բառարաններում արձանագրված են 17-ը, որոնցից, ըստ մեր դիտարկումների,

¹⁴ □ *Ոստչիմ*, տեայ. 1. տ. *Ոստնում*, 2. չուգել, յանձն չառնել, վեր վեր ցատքել□ (ԱԲ, էջ 652, ՆԶԲ, հ. 2, էջ 523):

¹⁵ Այսպիսի 15 բայ գրաբարում արդեն ունեին սոսկ *ալ-*ով վերջավորվող ձև, որ և հաստատվել է արևմտահայ աշխարհաբարում:

արդի արևմտահայերենում սովորական են միայն 5-ը. *երդնուլ, գրունուլ, զգենուլ, ընթեռնուլ, ոստնուլ*: Այն էլ պետք է նկատի ունենալ, որ դրանց լեզվական զուգահեռները (*երդում ընել, գրունել, հազնիլ, հագուիլ, ընթերցել, ցատկել*) եթե ոչ ավելի, ապա գոնե հավասարաչափ գործածվում են: Մյուս 12 բայերի համար պետք է ասել, որ այդ բայերի իմաստները լեզվում դրսևորվում են այլ բառերով, օրինակ՝ *ուռիլ՝ այտնուլ*-ի փոխարեն, իսկ լծորդական հարաբերակիցների առկայության դեպքում գործածության հաճախականության տեսակետից բացարձակապես գերակշռում են վերջիններս, օրինակ՝ *զարթնել, խրտչիլ*:

Չեզոք սեռի մի խումբ բայեր արևմտահայերենում օրինաչափորեն ներկայանում են *Ի* լծորդությամբ¹⁶: Օրինակ՝ *ուռիլ, պայթիլ*: Դրանցից որոշները գրաբարում արդեն ունեին Ի լծորդությամբ ձևեր, որոնք և հաղթել են աշխարհաբարում. *գրադիլ, ջեռիլ, սառիլ, քրտնիլ*: *Ջբադիլ* բայն արևմտահայերենում ձեռք է բերել *գրադուիլ* զուգահեռը: Գործածության հաճախականության տեսակետից, անշուշտ, *գրադիլ*-ն ավելի մեծ ընդգրկում ունի, սակայն *-ուռիլ*-ով ձևը ևս կիրառական է: Օրինակ՝ «Վայրի կենդանիներով *գրադիլը*, անշուշտ, գովելի է, բայց մի թե լաւագոյն պիտի չըլլար նաև իր կնոջ երջանկութիւնը խորհիլ»¹⁷: «Մինչ Կարապետ այսպէս *գրադուած էր*, Սերոբ *կ'իջեցնէ* իր խումբը սարէն վար եւ, պատռելով թշնամու շղթան, *կը հասնի* Գոգուռա սարը» (Բ, 1976, N1, էջ 48):

Քննարկվող տիպի 10 բայ արևմտահայերենի բառարաններում վկայված են *նել* վերջավորությամբ¹⁸: Մրանցից *առնել, լցնել* (կազմված է *լնուլ* հնագույն ձևի արմատի *լից* տարբերակից), *կլլել, կլանել, կալլել/կալնել, հեծնել* բայերը ներգործական են: Մյուսները՝ *զարթնել*¹⁹, *գրունել, թքնել*, չեզոք են: Ի դեպ, արդի արևմտահայերենի *Ե* լծ. *-ն*- ածանցավոր սակավաթիվ (մոտ 14) բայերի կեսը ներգործական է, կեսը՝ չեզոք: *Ջարթնել* և *գրունել* (վերջինս գիտակցվում է իբրև պարզ բայ *ն*-ն կատարյալի հիմքում պահպանվում է) բայերի այսպիսի *Ե* լծորդությամբ ձևերը թերևս արևելահայերենի ազդեցության արդյունք են: Պատահական չէ, որ դրանք սակավադեպ են գործածվում. այս բայաձևերի փոխարեն արդի արևմտահայր նախընտրում է *արթննալ* և *պտըտիլ* ձևերը, որոնք ձևաբանական կառուցվածքի տեսակետից, ինչ խոսք, ավելի հարագատ են արևմտահայերենին և վկայում են լեզվի՝ կանոնիկացման ու հստակացման միտումի և շարունակական գործընթացի մասին: Հիշենք, որ արևմտահայերենում

¹⁶ Բառարաններում արձանագրված այսպիսի բայերից մի երկուսը գործածական չեն, ինչպես՝ *շրտիլ, ջեռիլ*: Այդ իմաստները արտահայտվում են համապատասխանաբար *խրտչիլ* և *տաքնալ, բորբոքիլ, կտղիլ* բայերով:

¹⁷ Չարթունք (այսուհետև՝ Չ), Պէյրութ, 24. IX. 1967:

¹⁸ Դրանցից *պշնել* ձևի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ գրաբարաբանություն է և ո՛չ գրական-պաշտոնական, ո՛չ էլ խոսակցական լեզվում նույնիսկ հազվադեպ գործածությունը չունի: Ներկայումս այդ իմաստն արտահայտվում է *յառիլ* բայով:

¹⁹ ԲԳՀ-ն այս ձևը չի արձանագրում:

Ա և **Ի** լծորդությունները գերազանցապես չեզոք, իսկ **Ե** լծորդությունը ներգործական սեռի արտահայտիչ են:

Գրաբարում **-նուլ** վերջավորվող 10 չեզոքներ արևմտահայերենում օրինաչափորեն վերջավորվում են **-ուիլ՝ զբաղուիլ, զգածուիլ, թաքնուիլ, լքուիլ, խեղդուիլ, հերձուիլ, յենուիլ, փակուիլ, փքուիլ**: Ելնելով արևմտահայերենի ներկա կիրառական տվյալներից՝ հարկ է նշել, որ **փակուիլ**-ին զուգահեռ գործածվում է նրան հոմանիշ **զոցուիլ** բայը, որը բացակայում էր գրաբարում: Օրինակ՝ «Դռան բացուիլը և **զոցուիլը** երկրաշարժի մատնեց տունը» (Բ, 1962, N 8, էջ 31): «Հանդիսությունը **փակուեցաւ** Հայր Սուրբին «Պահպանիլ»-ով»²⁰: **Թաքնուիլ** (նաև՝ **թաքսիլ**) բայը գործածության հաճախականության տեսակետից զիջում է նորակազմ պահուրտիլ բային, օրինակ՝ «Չուզեց **պահուրտիլ**»²¹:

Գրաբարում **-նուլ**-ով վերջավորվող և **Ե** լծորդությամբ զուգահեռներ ունեցող ներգործական բայերն արևմտահայերենում օրինաչափորեն ներկայանում են **Ե** լծորդությամբ, օրինակ՝ **եղծել, խցել**, իսկ **Ա** լծորդությամբ ձևային զուգահեռներ ունեցող չեզոքները՝ **Ա** լծորդությամբ, օրինակ՝ **բաղձալ, նողկալ, ցածնալ**:

Այսպիսով, հանգում ենք հետևյալ եզրակացություններին: 1. Գրաբարի **Ու** լծորդության **-ն**- ածանցավոր բայերից արդի արևմտահայերենում որոշակիորեն գործում են միայն 5-ը՝ **երդնուլ** (պակասավոր է, լրացվում է երդում ընել հարադիրով), **զբօնուլ, զգենուլ, ընթեռնուլ, ոստնուլ**, այն էլ՝ լծորդական զուգահեռներով, որոնք, բացառությամբ երդուրննալ բայի, ավելի հաճախական են **Ու** լծորդությամբ ձևերից: Ներգործական սեռի իմաստ արտահայտելու դեպքում բայերն անցել են հիմնականում **Ե**, իսկ չեզոքի դեպքում՝ **Ի, Ա** լծորդությունների: Անշուշտ, կան նաև բացառություններ, բայց դրանք, որ չափազանց կարևոր է, բացատրելի են: 2. **-Ն**- ածանցն այս բայերի մեջ ոչ միշտ է հանդես բերում հաստատուն օրինաչափություն. որոշ դեպքերում տեղի են ունենում ածանցի քարացում, անկում, ածանցի կամ ընդհանրապես բայերի փոխարինումներ:

Հայերենի բայական **-չ**- ածանցը հանդես է գալիս միայն ներկայի հիմքից կազմված ժամանակներում և արտահայտում է չեզոքության իմաստ²²: ՆՀԲ-ի **Ի** լծորդության **-չ**-, **-նչ**- ածանցավոր 25 բայերից 13-ը՝ **երկնչիմ, թաքչիմ, թոչիմ, խրտչիմ, կառչիմ, կափչիմ, կորնչիմ, հանգչիմ, հարթչիմ, մատչիմ, մարտնչիմ, սարտչիմ, փախչիմ**, թեև արևմտահայերենի բառարաններում վկայված են, սակայն պետք է նկատի ունենալ նաև հետևյալը: 1. **Թաքչիլ**-ը պակասավոր է և քիչ գործածական **թաքնուիլ**-ի հանդեպ: 2. **Մատչիլ**-ը պակասավոր է, ունի գործածության սահմանափակում (բարձր ոճ), հաճախ փոխարինվում է մօտենալ ամբողջական բայով: 3. **Հարթչիլ**-ն ու **սարտչիլ**-ը անհետացել են ակտիվ բառապաշարից, փոխարինվում են **խրտչիլ**-ով: 4. **Խրտչիլ**-ն ու **հանգչիլ**-ը, ի

²⁰ Ազգակ, Պեյրութ, 8. III. 1997: Այսուհետև սկզբնաղբյուրը տեքստում՝ Ազ:

²¹ Շահնուր Շ., Բաց տոմարը, Փարիզ, 1971, էջ 94:

²² Տե՛ս **Ղազարյան Ս.**, Հայոց գրական լեզվի պատմություն, Ե., 1961, էջ 275:

տարբերություն գրաբարի, պարզ են. ածանցը ձևավել է արմատին: 5. **Թոշիլ**-ն ու **փախչիլ**-ը ձեռք են բերել ձևային նոր զուգահեռներ) անածանց ձևեր: 6. **Երկնչիլ** բայի միայն ներկայի հիմքից կազմված ձևերն են գործում լեզվում, իսկ քերականական մյուս իմաստներն արտահայտվում են **վախնալ, դողալ, սոսկալ, սարսափիլ** բայերի համապատասխան ժամանակաձևերով: 7. **Չատչիլ**-ը և **կորնչիլ**-ը թաքչիլ բայի պես ձեռք են բերել ուիլ վերջավորություն:

Ինչպես տեսնում ենք, հիշատակված բայերի մեջ **-չ**- ածանցը անխտիր նույն արժեքը չունի: Բայերը հատկանշվում են **-չ**- ածանցի ձուլմամբ, անկմամբ, ածանցի կամ ընդհանրապես բայերի փոխարինումներով (լրիվ կամ մասնակի): Այս ամենի հիման վրա առանց սխալվելու կարելի է ասել, որ լեզվում սկսվել է **-չ**- ածանցի «նահանջի» գործընթաց: Ճիշտ է, բայական **-չ**- ածանցով ձևավորված չիլ վերջավորությունը հաղթանակել է **-նուլ**-ի հանդեպ (ի դեպ, **նուլ-չիլ** փոխանցմամբ գրաբարից արևմտահայերենին անցած բոլոր բայերը գրաբարում արդեն ունեին **-չիլ**-ով վերջավորվող զուգահեռներ), սակայն ինքն էլ հաղթվել է ուրիշ ձևերից. իբրև չեզոք սեռի ձևաբանական ցուցիչ աստիճանաբար գերիշխող են դարձել **իլ** և **ուիլ** վերջավորությունները:

Այսպիսով, **ուլ, նուլ** վերջավորությունների պես **չիլ**-ը ևս արևմտահայերենում քայքայվել է. բացառություն են կազմում գրաբարյան թոշիլ, փախչիլ և նորակազմ փլչիլ (<գրբ. **փլանիլ**), դպչիլ (<գրբ. դիպիլ), փակչիլ բայերը (վերջին երկուսի հաստատվելը լեզվում թերևս բացատրվում է դրանց նույնանիշների՝ **դպչիլ, դպնալ, փակիլ** բայերի պակասավոր լինելով): Այս առիթով կարևոր է Ա. Այտընյանի կարծիքը. «Դեռ պարզման սկզբում են վերացել 2 կնճռոտ հին լծորդություններ՝ **անեմ** և **ուլ**...Իսկ հետին դարերում ավելի դյուրին է դարձել **ուլ, չիլ** լծորդությունը փոխարինել բոլորովին առանձին բառերով...միայն խոնարհումը հեշտացնելու նպատակով»²³:

Ինչպես երևում է, գրաբարի **չիլ, նչիլ** և **նուլ** կառուցվածքով շատ բայեր արևմտահայերենում միավորվել են թե՛ ձևով, թե՛ խոնարհմամբ: Բանն այն է, որ դեռևս գրաբարում դրանք, ձևով տարբեր լինելով, միավորվում էին թեքման որոշ ձևերում (անցյալ կատարյալ և երկրորդ ապառնի), որով և հիմք էր դրվում դրանց հետագա միասնությանը:

Ամփոփենք: Գրաբարի սոսկածանցավոր բայերի՝ արևմտահայերենում կրած տեղաշարժերը քերականական ձևերի ընդհանրացման ու միօրինակացման, քերականական ձևերի և իմաստների առավել համապատասխանեցման միտումի արդյունք են: Այդ բայերի պարզվելը (իսկ ածանցագուրկ զուգակիցների առկայության դեպքում՝ վերջիններիս տարածումը և ածանցավորների մոռացվելը) արևմտահայերենում մեծ մասամբ կապված են հիմքերի հակադրության և նրանց իմաստների արտահայտման փոփոխությունների հետ: Լեզուն նաև ձգտել է ազատվել ընդհանուր հիմնական ձևային կազմված այն տարածներից, որոնք բառիմաստային տարբերություններ չեն դրսևորում: Դրանցից որևէ մեկի

²³ Տե՛ս Այտընյան Ա., նշվ. աշխ., էջ 70-71:

հաստատվելը լեզվում ունի որոշակի հիմնավորվածություն՝ պայմանավորված սեռային, իմաստային, բայակազմական յուրահատուկ հատկանիշներով: Վերջիններիս հետ են կապվում նաև գրաբարի սոսկածանցավոր բայերի՝ արևմտահայերենում կրած լծորդական և կառուցվածքային փոփոխությունները:

**СООТВЕТСТВИЯ ПРОИЗВОДНЫХ ГЛАГОЛОВ ДРЕВНЕ-АРМЯНСКОГО
ЯЗЫКА (ГРАБАРА) В ЗАПАДНОАРМЯНСКОМ**

ГАЛСТЯН

Резюме

Изменения, которым подверглись производные глаголы грабара в западноармянском языке, обусловлены общей тенденцией языка, выражающейся в обобщении и унификации грамматических видов, также в приведении в максимальное соответствие грамматических значений и грамматических видов.